

ՏԵՂԵԿԱՆՔ

Հիմք ընդունելով 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերը և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացրել է Բարձրագույն դատական խորհրդի անդամների և Սահմանադրական դատարանի դատավորների, ինչպես նաև վերջիններիս ընտանիքի անդամների կողմից ներկայացրած հայտարարագրերի վերլուծություն:

Իրականացված վերլուծությունների արդյունքում կազմված հայտարարագրերի վերլուծության արձանագրությունները ներկայացվել են հայտարարատուներին՝ հայցելով պարզաբանում հայտնաբերված անհամապատասխանությունների վերաբերյալ:

Հայտարարագրերի վերլուծության ընթացքում հայտնաբերված անհամապատասխանությունները հիմնականում վերաբերել են հետևյալին.

- տարվա ընթացքում կատարված ծախսերի, ընդհանուր առմամբ վարած կենսակերպի անհամապատասխանություն տարեկան եկամուտների մակարդակին: Դեպքերի մեծամասնությունում, տարեկան եկամուտը գերազանցող ծախսերը կատարվել են խնայված կամ պաշտոնի ստանձնման ժամանակ հայտարարագրված դրամական միջոցների նվազեցման միջոցով:
- ըստ տարիների՝ առկա են էական անհամապատասխանություններ և շեղումներ կատարված տարեկան ընթացիկ ծախսերի միջև (վերլուծությունների արդյունքում բացահայտվել են դեպքեր, երբ օրինակ՝ տարեկան ընթացիկ ծախսերը հաշվարկվել են միջինում 10-15 միլիոն ՀՀ դրամ, սակայն առանձին տարիների այդ գումարը հասել է 70-100 միլիոն ՀՀ

դրամի, մինչդեռ հայտարարագրման ենթակա գույքի ձեռքբերում կամ որևէ այլ գործարք չի հայտարարագրվել),

- հայտարարագրված և փաստացի առկա դրամական միջոցների միջև անհամապատասխանություններ (հաշվի առնելով, այն հանգամանքը, որ մինչև 2019 թվականը դրամական միջոցները հայտարարագրելիս օրենսդրական պահանջ չի եղել տարբերակելու կանխիկ և անկանխիկ միջոցները՝ 2019 թվականից հետո ներկայացված տարեկան հայտարարագրերից դեպքերի մեծամասնությունում պարզվել է, որ նախկինում հայտարարագրված դրամական միջոցները հիմնականում վերաբերել են կանխիկին, իսկ հաշիվներում պահվող դրամական միջոցները պատշաճ չեն հայտարարագրվել),
- տարվա ընթացքում ստացված նվիրատվություններ, մասնավորապես՝ որոշ դեպքերում հայտարարագրվել են նվիրատվություններ անձանցից, ում տնօրինման տակ նմանատիպ դրամական միջոցների առկայությունը հարցեր է առաջացրել Հանձնաժողովի մոտ, երբեմն նվիրատվությունները կրել են պարբերական բնույթ կամ ապահովել են հայտարարատուների տարեկան եկամուտների զգալի մասը: Հատկանշական է, որ մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը ստացված նվիրատվությունների ճնշող մեծամասնությունն իրականացվել է կանխիկ եղանակով, ինչն էլ զգալի խոչընդոտներ է ստեղծել դրանց արժանահավատությունը ստուգելու գործընթացում,
- հանձնված և վերադարձված փոխառություններում առկա անճշտություններ (անճշտությունները հիմնականում կապված են եղել բանկային ավանդների հայտարարագրման, ինչպես նաև ազգականներին կամ այլ սուբյեկտներին հանձնված փոխառությունների հայտարարագրման հետ: Կրկին, մինչև 2017 թվականի հուլիսի 1-ը գործարքների մեծամասնությունն իրականացվել է կանխիկ եղանակով՝ բացառելով դրանց նկատմամբ վերահսկողության հնարավորությունը),

- սեփականության իրավունքով փաստացի հայտարարատուներին պատկանող գույքը չի հայտարարագրվել (դեպքերի մեծամասնությունը վերաբերել է համատեղ սեփականության իրավունքով հայտարարատուներին պատկանող, սակայն հայտարարատուների կողմից չտնօրինվող գույքային միավորներին, սակայն եղել են դեպքեր, երբ չեն հայտարարագրվել հայտարարատուի կողմից տնօրինվող գույքի զգալի միավորներ),
- չի հայտարարագրվել առևտրային կազմակերպություններում մասնակցությունը (որոշ դեպքերում կազմակերպությունները տևական ժամանակ գործունեություն չեն ծավալել, որոշ դեպքերում եղել են հայտարարագրերի լրացման հետ կապված տարընկալումներ, այնուամենայնիվ՝ դիտավորությամբ չհայտարարագրման կասկածներ չեն առաջացել):
- հայտարարագրված դրամական միջոցների զգալի մասը, երբեմն՝ 99%-ը պահվել է կանխիկ ձևով: Հաճախ կանխիկ ձևով պահվող դրամական միջոցները բազմապատիկ գերազանցել են աշխատանքի վարձատրության դիմաց ստացվող տարեկան գումարի չափը:

Չնայած վերոնշյալ անհամապատասխանություններին՝ հաշվի առնելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված վաղեմության ժամկետներն անցած լինելու հանգամանքը՝ հայտարարագրերի վերլուծության արդյունքում վարույթ հարուցելու հիմքեր առկա են եղել միայն ստորև ներկայացված դեպքերում: Մասնավորապես հարուցվել է՝

- վարչական իրավախախտումների վերաբերյալ **հինգ վարույթ**, որոնցից երկուսը կարճվել են, երկուսի դեպքում կիրառվել է **նախազգուշացում վարչական տույժը**, իսկ մեկ վարույթը եզրափակվել է անձին վարչական պատասխանատվությունից ազատելու որոշմամբ:
- **երեք կարգապահական վարույթ**, որոնց վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ:

Հանձնաժողովի կողմից հարուցված վարույթների վերաբերյալ որոշումները հրապարակված են հետևյալ հղումներով.

- [Որոշում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին. Սերգեյ Չիչոյան](#)
- [Որոշում՝ վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթը կարճելու մասին. Լիպարիտ Մելիքջանյան](#)
- [Որոշում՝ վարչական պատասխանատվությունից ազատելու մասին. Արմեն Հայկյանց](#)
- [Որոշում՝ վարչական տույժ կիրառելու մասին. Անի Մխիթարյան](#)
- [Որոշում՝ վարչական տույժ կիրառելու մասին. Վիգեն Քոչարյան](#)

Միաժամանակ, երկու դեպքի առնչությամբ Հանձնաժողովի կողմից հայտարարագրերի վերլուծության արդյունքում ի հայտ եկած փաստերը հիմք են հանդիսացել ՀՀ գլխավոր դատախազություն դիմելու համար: Դեպքերից մեկում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից օրենքով սահմանված ժամկետում Հանձնաժողովին չէին տրամադրվել պարզաբանումներ և լրացուցիչ նյութեր: Երկրորդ դեպքում ՀՀ գլխավոր դատախազություն դիմելու համար հիմք էր հանդիսացել պաշտոնատար անձի կողմից այլ պետության քաղաքացիություն ունենալու հանգամանքը: